

**Փոստ անել որտեղ աշխատողները կարող են դյուրությամբ կարգալ
Օրինախախտները կարող են տուգանքների ենթարկվել**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԺԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄԻ ՍԱԿ
25-ից պակաս աշխատակից ունեցող գործատուներ

\$ 10.50 ժամական

Փասադինայում
Սկսման թվական.- 1 Հուլիս, 2017

1 Հուլիս, 2017ից սկսյալ 25-ից պակաս աշխատակից ունեցող գործատուներ պարտավոր են ժամական առնվազն 10.50 տոլար սակ վճարել յուրաքանչյուր աշխատակցի համար (անկախ նրանց ստացած TIPS-ից):

Փասատինա քաղաքի այս «Նվազագույն Ժամական Սակ»ի հրամանագիրը ի գործու է չափահաս ու անչափահաս (դպրոցական տարիքի) աշխատողներին, որոնք շաբաթական երկու ժամ կամ ավելի կը գործեն մի աշխատատեղի մոտ Փասատինայում:

Նոր օրինագծի հիմամբ աշխատողները քաղաքի նվազագույն աշխատավարձի իրավունքները պաշտպանելու համար չեն կարող վրեժխնդրության ենթակայ լինել: Աշխատողները կարող են քաղաքացիական հայց բանալ ընդդեմ իրենց գործատերերի նկատմամբ եթե այս որոշումը կը խախտեն. կամ կարող են գանգատի դիմել քաղաքի City's Department of Planning and Community Development-ի մօտ: Քաղաքը կհետաքննի հնարավոր խախտումները եւ, անհրաժեշտության դեպքում, կստանա աշխատավարձի գրառումները, ինչպես նախատեսված է օրենքով, հնարավորին չափով կբացահայտի խախտումները ու նվազագույն աշխատավարձի պահանջների պատվեր կվերականգնի աշխատողներին վճարումը ճիշդ կատարելու ու զանոնք գործից արձակումի պարագային գործատերին տուգանելով ու պարտադրելով անոնց ետ գործի առնելը: Բացի այդ, ցանկացած բիզնես, որ խախտում է դրույթները Փասադինայի սահմանված նվազագույն աշխատավարձի այս որոշմանը ենթակա է քրեական հետապնդման:

Փասատինայի նոր նվազագույն աշխատավարձի կանոնները հաստատվել են նախքան Կալիֆոռնիա նահանգի կողմից նման որոշում առնելը, որը ընթացքի մեջ է: Թեև նահանգի օրինագծի հետ ընդհանրություններ կան, կան նաեւ տարբեր պահանջներ: Եթե այս մասին հարց ունեք կամ հավելյալ մանրամասնությունների կկարոտ եք, կամ ձեզ թվում է որ ճիշդ չեք վճարվում ձեր աշխատանքի դիմաց հաճեցեք կապ հաստատել ձեր գործատերի կամ Փասատինա քաղաքի գրասենյակին հետ՝ դիմելով.-

City of Pasadena
Planning and Community Development Dept.
Minimum Wage Enforcement
Code Compliance Manager Jon Pollard
(626) 744-6831
Email: jpollard@cityofpasadena.net
Website: www.cityofpasadena.net/MinimumWage



National Day Laborer Organizing Network
Minimum Wage Outreach,
Education and Training
Coordinator – Julieta Aragon
500 N. Lake Avenue, Pasadena, 91101
(626) 676-8448
Email: julieta@ndlon.org

**Գործատերերը պատասխանատու են թարգմանելու այս ծանուցումը այն լեզուներով,
որոնք իրենց աշխատողների 5% կամ ավելի խօսակցական լեզուն է:**